

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

ԱՆՁՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՇՎԱՐԿԸ (ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏԸ) ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՆ
 ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառումը	Կատարողը	Ժամկետը	Նշումներ
1.	Հանրային իրազեկման աշխատանքների իրականացում			
1.1.	Հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու գործընթացի շրջանակներում կիրառվող հիմնական ուղերձների հստակեցում	Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն (համաձայնությամբ) Կենսաթոշակային բարեփոխումների կառավարման խորհուրդ	մինչև 25.09.2012 թ.	Կատարելով են հանրային իրազեկման շրջանակներում կիրառվող հիմնական ուղերձները՝ ըստ թիրախային խմբերի (գործատուներ, բանկեր, հաշվապահներ և այլն):
1.2.	Անձնավորված հաշվարկը (գրանցման հայտը) էլեկտրոնային եղանակով ներկայացնելու հանրային քարոզարշավի մեկնարկի միջոցառման կազմակերպում կենսաթոշակային բարեփոխումների գործընթացում ներգրավված պետական մարմինների, «Հայաստանի ՓՄՁ-ների զարգացման ազգային	Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն (համաձայնությամբ) Կենսաթոշակային	մինչև 25.09.2012թ.	Միջոցառման ընթացքում կներկայացվեն կենսաթոշակային բարեփոխումների գործընթացը, անձնավորված հաշվարկը (գրանցման հայտը) բացառապես էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կապակցությամբ առկա խնդիրները, այդ խնդիրները լուծելու

	կենտրոն» հիմնադրամի, Հաշվապահական կենտրոնի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գործարարության աջակցման գրասենյակի, գործատուների միությունների և շահագրգիռ այլ կազմակերպությունների (հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպություններ, բանկեր, հաշվապահական ծրագրեր մշակող կազմակերպություններ և այլն) ներկայացուցիչների մասնակցությամբ	բարեփոխումների կառավարման խորհուրդ		ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից նախատեսվող քայլերը, կիստակեցվեն գործընթացին աջակցելուն միտված պետություն-մասնավոր փոխշահավետ համագործակցության հիմնական ուղղությունները:
1.3.	Անձնավորված հաշվարկը (գրանցման հայտը) բացառապես էլեկտրոնային եղանակով ներկայացնելու, էլեկտրոնային ստորագրություն ստանալու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից օգտվողի անուն ու գաղտնաբառ ստանալու ընթացակարգի մասին իրազեկում գործատուներին և այլ թիրախային խմբերին	Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն (համաձայնությամբ)	սկսած 25.09.2012թ.	ԶԼՄ-ներով, գործատուների միությունների, հաշվապահական կազմակերպությունների, հարկային տեսչությունների, տարածքային կառավարման մարմինների և ՏԻՄ-երի (մարզերում) միջոցով և հնարավոր այլ միջոցներով գործատուների և այլ թիրախային խմբերի շրջանում կտարածվեն տեղեկատվական նյութերը, փողոցային վահանակների վրա կտեղակայվեն տեղեկատվական պաստառները, հեռուստացույցով և ռադիոյով կհեռարձակվեն գովազդային հոլովակներ և հայտարարություններ (այդ թվում տպագիր մամուլում): Միաժամանակ, որոշակի պարբերականությամբ կկազմակերպվեն մամուլի ասուլիսներ, հրապարակումներ տպագիր մամուլում:
2.	Անձնավորված հաշվարկը (գրանցման հայտը) բացառապես էլեկտրոնային եղանակով ներկայացնելն ապահովող ենթակառուցվածքների զարգացում			
2.1.	Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի մշակում և ներդրում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների	համաձայն պայմանագրով սահմանված ժամանակացույցի	Կմշակվեն, կփորձարկվեն և կներդրվեն ԵՀԿՎԱՀ-ի համակարգի՝ վարձու աշխատողների գրանցումը (գրանցման հայտը ներկայացնելը), եկամտային հարկի անձնա-

		կոմիտե Կապալառու կազմակերպություն (համաձայնությամբ)		վորված հաշվառումը (անձնավորված հաշվարկն էլեկտրոնային եղանակով ներկայացնելը) ապահովող մոդուլները:
2.2.	Բանակցություններ հաշվապահական ծրագրեր մշակող կազմակերպությունների հետ՝ համագործակ- ցության շրջանակների, հաշվապահական ծրա- գրերից անձնավորված հաշվարկի (գրանցման հայտի) ձևավորումն ապահովող ծրագրային փոփո- խություններ իրականացնելու, անձնավորված հաշ- վարկը (գրանցման հայտը) բացառապես էլեկտրո- նային եղանակով ներկայացնելու գործընթացին աջակցելու հնարավորությունների շուրջ	Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն (համաձայնությամբ) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե Կապալառու կազմակերպություն (համաձայնությամբ)	մինչև 25.09.2012 թ.	Հաշվապահական ծրագրեր մշակող կազ- մակերպությունների հետ կվարվեն համա- պատասխան բանակցություններ և ըստ անհրաժեշտության կկնքվեն փոխհամա- գործակցության հուշագրեր:
2.3.	Բանակցություններ բանկերի, Հայփոստի հետ՝ անձնավորված հաշվարկը (գրանցման հայտը) էլեկտրոնային եղանակով ներկայացնելու գործ- ընթացին աջակցելու հնարավորությունների, գործա- տուներին համապատասխան ծառայություններ մատուցելու պայմանների շուրջ	Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն (համաձայնությամբ) ՀՀ աշխատանքի և	մինչև 25.09.2012 թ.	Բանկերի, Հայփոստի հետ կվարվեն համապատասխան բանակցություններ և ըստ անհրաժեշտության կկնքվեն փոխհա- մագործակցության հուշագրեր:

		<p>սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն ՀՀ Ֆինանսների նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե Կապալառու կազմակերպություն (համաձայնությամբ)</p>		
2.4.	<p>Բանակցություններ կապի օպերատորների, ինտերնետ մատակարարների հետ՝ ինտերնետ ծածկույթն ընդլայնելու և փոքր բիզնեսին հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելն ապահովող գործիքներ տրամադրելու հնարավորությունների շուրջ</p>	<p>Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն (համաձայնությամբ) ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե Կապալառու կազմակերպություն (համաձայնությամբ)</p>	մինչև 25.09.2012թ.	Կապի օպերատորների, ինտերնետ մատակարարների հետ կվարվեն համապատասխան բանակցություններ և ըստ անհրաժեշտության կկնքվեն փոխհամագործակցության հուշագրեր:
2.5.	Անձնավորված հաշվարկը (գրանցման հայտը)	Կենսաթոշակային	մինչև	Հաշվապահական ծրագրեր մշակող

	բացառապես էլեկտրոնային եղանակով ներկայացնելն ապահովող ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն	բարեփոխումների կառավարման խորհուրդ	10.10.2012թ.	կազմակերպությունների, կապի օպերատորների, ինտերնետ մատակարարների, բանկերի, Հայփոստի հետ բանակցությունների արդյունքների հաշվառմամբ համապատասխան առաջարկություններ կներկայացվեն ՀՀ կառավարություն:
2.6.	Գրանցման հայտի և անձնավորված հաշվարկն այլ կազմակերպությունների միջոցով ներկայացնելն ապահովող ընթացակարգի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն (ներառյալ ծառայությունների արժեքը և 1-ին տարվա ընթացքում ՀՀ կառավարության կողմից վճարելու հնարավորությունը)	Կենսաթոշակային բարեփոխումների կառավարման խորհուրդ	մինչև 10.10.2012 թ.	Կնշակվի և ՀՀ կառավարության հաստատմանը կներկայացվի համապատասխան ընթացակարգ, որի համաձայն գործատուն (փոքր բիզնեսը) ծառայություններ մատուցող կազմակերպություններին (բանկեր, Հայփոստ, ԿՀԿ և այլն) կտրամադրի գրանցման հայտի և անձնավորված հաշվարկի թղթային տարբերակը, իսկ այդ կազմակերպությունները կապահովեն համապատասխան տեղեկատվությունը հարկային մարմինն էլեկտրոնային եղանակով ներկայացնելը:
3.	Գործատուների և այլ թիրախային խմբերի կարիքների գնահատում և բավարարելու ուղղությամբ միջոցառումների իրականացում			
3.1.	Գործատուների կարիքները գնահատելու նպատակով համապատասխան հարցաթերթիկի էլեկտրոնային տարբերակի մշակում	Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն (համաձայնությամբ)	մինչև 25.09.2012թ.	Կնշակվի և www.epension.am կայք-էջում կտեղակայվի համապատասխան հարցաթերթիկ, որն առցանց կարող են լրացնել գործատուները և այլ թիրախային խմբեր:
3.2.	Լրացված հարցաթերթիկների ամփոփում և արդյունքների ներկայացում ԿԲԿՄ-ին	Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն (համաձայնությամբ)	մինչև 10.10.2012 թ.	Կամփոփվեն լրացված հարցաթերթիկները և ըստ գործատուների և այլ թիրախային խմբերի կդասակարգվեն կարիքները (մարզ/Երևան, գյուղ/քաղաք, մանր/միջին/մեծ և այլն):
3.3.	Գործատուների և այլ թիրախային խմբերի կարիքները բավարարելու ուղղությամբ համապատասխան	Կենսաթոշակային բարեփոխումների	մինչև 10.10.2012 թ.	Կարիքները բավարարելու ուղղությամբ համապատասխան առաջարկություններ

	թիրախային ծրագրերի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն	կառավարման խորհուրդ		կներկայացվեն ՀՀ կառավարություն (օրինակ՝ գործատուների առանձին խմբերի՝ Համակարգիչ յուրաքանչյուրի համար ծրագրում ընդգրկում, ինտերնետ հասանելիության ապահովում և այլն):
3.4.	Գործատուների և այլ թիրախային խմբերի կարիքները բավարարելու ուղղությամբ թիրախային ծրագրերի իրականացում	Կենսաթոշակային բարեփոխումների կառավարման խորհուրդ	սկսած 10.10.2012թ.՝ համաձայն հաստատված ծրագրի	
3.5.	Համակարգչային տեխնիկա, համակարգչից օգտվելու հմտություններ ունեցող աշխատող և ինտերնետ հասանելիություն ունեցող Հայաստանի Հանրապետության բոլոր գյուղական համայնքների աշխատակազմերի և դպրոցների գույքագրում	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ մարզպետներ համայնքների ղեկավարներ (համաձայնությամբ)	մինչև 25.09.2012 թ.	Գույքագրման արդյունքում կառանձնացվեն այն գյուղական համայնքների աշխատակազմերը կամ դպրոցները, որոնք համալրված են համապատասխան համակարգչային տեխնիկայով, ինտերնետ հասանելիությամբ և համակարգչից օգտվելու ծրագրային հմտություններ ունեցող աշխատողներով:
3.6.	Գույքագրման արդյունքների տրամադրում կենսաթոշակային համակարգի իրագրելման կենտրոնին՝ առանձնացնելով այն համայնքները, որտեղ էլեկտրոնային եղանակով հաշվարկների ներկայացման համար անհրաժեշտ պայմանները կամ դրանցից որևէ մեկը բացակայում է	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	մինչև 25.09.2012 թ.	ուսուցման պահանջարկի գնահատում, խնդրահարույց համայնքների առանձնացում
3.7.	Ուսուցման համար անհրաժեշտ միջոցների և ֆինանսավորման աղբյուրների հստակեցում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 25.09.2012թ.	ուսուցման ծրագրի ֆինանսական ապահովում

		ՀՀ տարածքային կառավարման նախարարություն Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն (համաձայնությամբ)		
3.8.	Ուսուցման մարզային պատասխանատուների և մարզային ուսուցանողների ընտրության չափորոշիչների մշակում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն (համաձայնությամբ)	մինչև 25.09.2012թ.	ուսուցման աշխատանքների որակի ապահովում
3.9.	Ուսուցման մարզային պատասխանատուների և մարզային ուսուցանողների հետ կնքվելիք օրինակելի պայմանագրի մշակում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն (համաձայնությամբ)	մինչև 25.09.2012 թ.	ուսուցման մարզային պատասխանատուների և մարզային ուսուցանողների իրավունքների և պարտականությունների, պատասխանատվության շրջանակի հստակեցում
3.10.	Ուսուցման մարզային պատասխանատուների և մարզային ուսուցանողների ընտրություն և նրանց հետ համապատասխան պայմանագրերի կնքում	Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն (համաձայնությամբ) ՀՀ տարածքային կառավարման	մինչև 10.10.2012 թ.	Կնքվեն համապատասխան պայմանագրեր՝ յուրաքանչյուր մարզում մեկ մարզային պատասխանատուի (ընդամենը՝ 10) և 2 մարզային ուսուցանողի (ընդամենը՝ 20) հետ:

		նախարարություն		
3.11.	Ուսուցման մարզային պատասխանատուների և մարզային ուսուցանողների վերապատրաստում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն (համաձայնությամբ) ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	մինչև 20.10.2012 թ.	Կկազմակերպվի ուսուցման մարզային պատասխանատուների և մարզային ուսուցանողների վերապատրաստում:
4.	Գործատուների և այլ թիրախային խմբերի ուսուցում			
4.1.	Անձնավորված հաշվարկը (գրանցման հայտը) էլեկտրոնային եղանակով ներկայացնելու ուսուցողական և տեղեկատվական նյութերի մշակում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն (համաձայնությամբ)	1-ին փուլ՝ մինչև 01.10.2012 թ. 2-րդ փուլ՝ մինչև 01.11.2012 թ.	Ի կատարումն ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1487-Ն որոշման N 2 հավելվածի 1.8-րդ և 3.6-րդ կետի կմնակվեն ուսուցողական և տեղեկատվական նյութերը՝ երկու փուլով՝ 1-ին փուլում հիմք ընդունելով կապալառու կազմակերպության տրամադրած ինտերֆեյսերը, կմնակվեն տեղեկատվական և ուսուցողական նյութեր (այդ թվում՝ տեսահոլովակներ), որոնց շրջանակներում գործընթացը կնկարագրվի ընդհանուր գծերով (նյութերի տարածումը և տեսահոլովակների հետարձակումը կսկսվի օրենքների նախագծերը ՀՀ ԱԺ-ում ընդունվելուց անմիջապես հետո). 2-րդ փուլում կմնակվի տեղեկատվական և ուսուցողական նյութերի նոր խմբաքանակ, որոնց շրջանակներում գործատուներին

				կտրամադրվեն գործնական հմտություններ և կիրառական գիտելիքներ (ծրագրային ապահովման օգտվողի ձեռնարկ, համակարգչային ծրագրի ուսուցողական տարբերակ՝ տեսահոլովակի ձևով և այլն):
4.2.	Էլեկտրոնային ստորագրությունները ճանաչող սարքերի (ID card reader) ձեռքբերում	Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն (համաձայնությամբ) Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ (համաձայնությամբ)	մինչև 01.11.2012 թ.	Ձեռք կբերվի շուրջ 20000 սարք՝ ուսումնական փաթեթների շրջանակներում ուսուցանվողներին տրամադրելու նպատակով:
4.3.	Շրջիկ ուսուցանող խմբերի ձևավորում	Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն (համաձայնությամբ)	մինչև 01.11.2012 թ.	Կձևավորվեն ոչ պակաս, քան 8 շրջիկ խմբեր, որոնք մարզային ուսուցանողների հետ համատեղ կապահովեն ուսուցումը մարզերում:
4.4.	Գործատուների համար հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու ուսուցողական միջոցառումների ծրագիր-ժամանակացույցի կազմում և իրականացում ըստ թիրախային խմբերի	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե Կենսաթոշակային համակարգի իրազեկման	սկսած 25.09.2012թ.	Ծրագիր-ժամանակացույցը կկազմվի ըստ մարզերի՝ հիմք ընդունելով գույքագրման արդյունքները, Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոնի և մարզային պատասխանատուների առաջարկությունները: Յուրաքանչյուր ուսուցանվողի կտրամադրվի փաթեթ, որն, ի թիվս այլ նյութերի,

		կենտրոն (համաձայնությամբ) Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածք- ների ներդրման գրասենյակ (համաձայնությամբ)		կներառի՝ 1) ID card reader (ներառյալ տեղակայման (ինստալացիոն) սկավառակը). 2) ԵՀԿՎԱՀ-ի ուսումնական ձեռնարկ. 3) համակարգչային ծրագրի ուսուցողա- կան տարբերակը՝ ձայնագրված Էլեկտրոնային սկավառակի վրա:
4.5.	Ուսուցման համար անհրաժեշտ դահլիճների ապահովում	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն համայնքների ղեկավարներ (համաձայնությամբ)	մինչև 10.10.2012 թ.	ուսուցման աշխատանքների շենքային պայմանների ապահովում
4.6.	Հայաստանի Հանրապետության մարզկենտրոններում համապատասխան աշխատասենյակների (կենտրոնների) ձևավորում	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	մինչև 20.10.2012 թ.	Կլահավորվի համապատասխան աշխատասենյակ մարզային պատասխանատուների համար՝ ապահովելով համակարգչով, ինտերնետ կապով և մարզային թեժ գիծ հեռախոսահամարով
4.7.	Ուսուցիչների, Հայփոստի աշխատողների, համայնքների աշխատակազմերի աշխատողների և այլ թիրախային խմբերի ուսուցման ծրագիր-ժամանակացույցի կազմում և իրականացում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	սկսած 25.09.2012 թ.	Համաձայն ձեռք բերված պայմանավորվածությունների՝ կկազմակերպվի թիրախային խմբերի ուսուցում անձնավորված հաշվարկը (գրանցման հատը) էլեկտրոնային եղանակով ներկայացնելու գործընթացում տնտեսավարող սուբյեկտներին աջակցելու կամ համապատասխան ծառայություններ մատուցելու նպատակով:

		Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն (համաձայնությամբ)		
4.8.	Գործատուներին մասսայաբար էլեկտրոնային ստորագրություններ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից օգտվողի անուն ու գաղտնաբառ տրամադրելու ծրագրի իրականացում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ռադիկալություն	10.10.2012 թ. – 30.11.2012 թ.	70.000 տնտեսավարող սուբյեկտի կտրամադրվի էլեկտրոնային ստորագրություններ և մուտքի անուն ու գաղտնաբառ:
4.9.	Աջակցություն գործատուներին՝ իրենց վարձու աշխատողների նախնական գրանցում իրականացնելու գործընթացում (գործատուի համաձայնությամբ պիլոտային ծրագրի իրականացում)	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն (համաձայնությամբ)	սկսած 01.10.2012 թ.	Գործատուների համաձայնությամբ կիրականացվի վարձու աշխատողների նախնական գրանցում (պիլոտային ծրագիր):

4.10.	<p>Էլեկտրոնային եղանակով հաշվարկների ներկայացման համար խնդրահարույց համայնքների գործատուների ուսուցման կամ դրանց հաշվարկներն էլեկտրոնային եղանակով ներկայացնելուն օժանդակող աշխատանքային միջոցառումների առանձին ծրագրի մշակում (այդ թվում մոտակա համայնքներին դրանց «ամրագրում», «օգնության» օրերի նշանակում և պատասխանատուների կողմից օգնության տրամադրում տեղերում, իրազեկում)</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե</p>	<p>15.10.2012 թ.- 28.12.2012 թ.</p>	<p>Էլեկտրոնային եղանակով հաշվարկների ներկայացման համար խնդրահարույց համայնքներին օժանդակություն</p>
-------	--	---	---	---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ն Ե Ր Կ Ա Յ Ա Ց Ո Ւ Ց Չ Ա Կ Ա Ն Կ Ա Ջ Մ

ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՎ ՆԱԽԱՏԵՄՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ
ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Հայաստանի Հանրապետության մարզպետ (աշխատանքային խմբի ղեկավար)

Հայաստանի Հանրապետության մարզպետարանի ներկայացուցիչ (ներկայացուցիչներ)

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ներկայացուցիչ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՋՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ